ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ

«ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱԳՈՒՀՈՒ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ»՝ ՆՎԻՐՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՁՈՀՎԱԾ ՀԱՅԱԶԳԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սեպտեմբերի 30-ին Թբիլիսիի ամենամեծ՝ «Ամիրանի» կինոթատրոնում տեղի ունեցավ երիտասարդ կինովավերագիրներ Դավիթ Գուլիկյանի եւ Արթուր Մարտիրոսյանի նկարահանած «Շուշանիկ թագուհու գումարտակը» վավերագրական ֆիլմի պրեմիերան:

Ֆիլմը նվիրված է 1990-ականների սկզբին վրաց-աբխազական հակամարտության եւ Վրաստանի միասնականության համար մարտնչած վրաստանցի ազգությամբ հայ զինվորներին ու կամավորականներին, որոնց մասնակցության եւ սխրագործությունների մասին ֆիլմում վկայություններ են տալիս պատերազմի վետերանները:

Ֆիլմի ցուցադրումից հետո, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, մասնավորապես, նշեց, որ ֆիլմը կրկին արձանագրում է այն անհերքելի ճշմարտությունը, որ վիրահայերը հյուրընկալ վրաց հողում իրենց բազմադարյա պատմության ընթացքում մշտապես եղբայրական վրաց ժողովրդի կողքին են կանգնել ու անմնացորդ սիրել իրենց երկիրը՝ գնալով անձնազոհության, երբ սասանվել է Վրաստանի միասնականությունը:

Դեսպանը շնորհակալություն հայտնեց ֆիլմի ռեժիսորներին եւ բոլոր նրանց, ովքեր աջակցել են այս մտահաղացման իրականացմանն ու իրենց աջակցությունը բերել այս գործին, ինչպես նաեւ իր խոնարհումը բերեց դահլիճում ներկա վետերաններին:

- Ֆիլմը նվիրված է վրաց-աբխազական հակամարտության ընթացքում, վրացական կողմից մարտնչող եւ զոհված վիրահայ մարտիկներին: Այս ուսումնասիրությունը, հավաքված նյութերը եւ դրանց արդյունքում ստեղծված ֆիլմն անհրաժեշտ է հայերի դերը Աբխազիայի պատերազմում կարեւորելու համար, քանի որ մինչ այս շատերը կարծում էին, որ հայերը միայն հակառակորդի կողմից են կռվել, ինչը բնականաբար իրականությանը չի համապատասխանում,- ասաց Դավիթ Գուլիկյանը եւ հավելեց, որ կինոնկարը պատմական իրականությունն արտացոլելու նպատակ ունի:

Ֆիլմի համահեղինակ Արթուր Մարտիրոսյանը նշեց, որ մեծ պատիվ է իր ֆիլմը հանձնել թբիլիսահայ հանդիսատեսի դատին:

- Ավելի քան 30 տարի է անցել Աբխազիայի պատերազմից, սակայն Վրաստանի հասարակությունը սպասում էր ոչ թե այս ֆիլմին, այլ ընդհանուր մի թեմայի, որ հայերը կռվել են ոչ միայն հակառակորդի, այլեւ Վրաստանի կողմից: Սա ենք ուզում ցույց տալ հանդիսատեսին եւ շատ ուրախ ենք, որ այսօր այսքան մարդ է հավաքվել,- նշեց Արթուր Մարտիրոսյանը:

Վավերագրական ֆիլմի շնորհանդեսին ելույթ ունեցան նաեւ քաղաքագետ, Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամավոր Մամուկա Արեշիձեն, վրաց-աբխազական հակամարտության մասնակից, վետերան, պահեստի գնդապետ Դոդո (Դարեջան) Գուգեշաշվիլին:

ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ «ՁԱՅՆԵՐԸ»

Խմբագրության էլեկտրոնային հասցեին ստացվել էր նամակ Աննա Նազարյանից, ով, Սուրբ Գեւորգ եկեղեցու երգչախմբի կատարումներից հիացած, խնդրել էր մեզ մանրամասնել, թե ում ձայներն են այնտեղ հնչում, նաեւ փոքր-ինչ ներկայացնել հայ եկեղեցական երաժշտության ծագման պատմությունը:

Սկսենք պատմությունից. հայկական երաժշտական մշակույթը սկիզբ է առնում մ.թ.ա. II հազարամյակից: Այդ մասին իրենց աշխատություններում վկայում են հին հայ պատմիչներ Մովսես Խորենացին եւ Փավստոս Բուզանդը: Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն ընդունելուց անմիջապես հետո, աստիճանաբար սկսեց զարգանալ եկեղեցական հոգեւոր երաժշտությունը: 405-406 թվականներին հայոց գրերի ստեղծումը եւս մեծ դեր խաղաց եկեղեցական հոգեւոր երաժշտության զարգացման գործում: Վանքերում, որոնք ե'ւ հոգեւոր, ե'ւ կրթական կենտրոններ էին, ուսուցանվում էր երաժշտություն: Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերի շնորհիվ, տեքստերը պահպանվել են մինչ օրս: Առաջին շարականներն աչքի էին ընկնում իրենց լակոնիկ ձեւով եւ բովանդակության հստակությամբ, տեքստերն ու մեղեդիները պարզ եւ փոքրածավալ էին: Ժամանակի ընթացքում շարականները գրվեցին առավել բարդ ոճական խորությամբ, առաջ բերելով ժանրային բազմազանություն՝ պատարագաերգեր, գանձական երգեր, ավետիսներ ու պրոֆեսիոնալ հոգեւոր մոնոդիկ երաժշտության այլ տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատկությունները՝ բանաստեղծական տեքստի եւ երաժշտության առումով:

Արդեն 5-րդ դարում իրականացվում է ձայների համակարգում, իսկ 7-րդ դարում Բարսեղ Ճոնը (երաժիշտ-տեսաբան, երգահան, վանահայր) կազմում է շարականների առաջին ժողովածուն («Ճոնընտիր Շարակնոց»), 8-րդ դարում Ստեփանոս Սյունեցին կատարում է ձայների երկրորդ համակարգումը եւ եկեղեցական երաժշտության մեջ ներմուծում քանոնը: 8-9-րդ դարերում հորինվում են երաժշտական նոտագրման համակարգեր՝ խազեր: 10-րդ դարում ի հայտ է գալիս պրոֆեսիոնալ մոնոդիկ (միաձայն) երաժշտության նոր ժանր՝ տաղը: Տաղերի հեղինակներից են միջնադարյան բանաստեղծներ Գրիգոր Նարեկացին (X), Խաչատուր Տարոնացին (XII դար), ուրիշներ:

Խոսել հայկական երաժշտության մասին եւ չնշել Կոմիտասի (1869-1935) եւ Մակար Եկմալյանի (1856-1905) անունները, մեծ սխալ կլինի:

Մակար Եկմալյանի ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ դաշնամուրային նոկտյուրն, սիմֆոնիկ նախերգանք եւ այլն: Նրա երգային ժառանգության առանցքը հոգեւոր, աշխարհիկ երգերի մշակումներն են եւ հատկապես նրա գլուխգործոցը՝ «Պատարագը»: Նախքան վերջինիս հրատարակումն ու ամբողջական կատարումը նրա տարբեր հատվածներ՝ «Սուրբ Աստված», «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ», «Հայր մեր», «Տէր ողորմեա» եւ այլն՝ Ներսիսյան դպրոցի երգչախմբի կատարմամբ, հնչել են եկեղեցում եւ հետագայում էլ, հաճախ առանձին կատարվելով, ինքնուրույն համերգային կյանք են ունեցել: Նշենք, որ Մակար Եկմալյանը 1891 թվականից բնակվել է Թբիլիսիում եւ նույն թվականից մինչեւ 1902 թվականը դասավանդել Ներսիսյան դպրոցում, որտեղ ստեղծել է տղամարդկանց երգչախումբ:

Հենց Թբիլիսիում էլ, կոմպոզիտոր Մակար Եկմալյանի ղեկավարությամբ, երաժշտական տեսական առարկաներն է ուսումնասիրում Կոմիտասը:

Կոմիտասի ստեղծագործական ոճը յուրահատուկ է իր տեսակի մեջ: Նրա երաժշտական ժառանգությունն ընդգրկում է վոկալ, խմբերգային՝ ժողովրդական ե'ւ հոգեւոր, ե'ւ դաշնամուրային ժանրի ստեղծագործություններ՝ «Կռունկ»-ը, «Հայր մեր»-ը, «Մշո շորոր»-ը: Կոմիտասի ստեղծագործության մեջ առանձնակի կարեւորություն է ներկայացնում իր մեծակտավ գործը՝ «Պատարագ»-ը:

Սուրբ Պատարագներին երգելու ավանդույթը զարգացել եւ զարգանում է մինչ օրս: Ամեն կիրակի աշխարհի բոլոր Հայ առաքելական եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ: Բացառություն չեն կազմում նաեւ Թբիլիսիի հայկական եկեղեցիները:

Իսկ հիմա պատմենք Թբիլիսիի «Սուրբ Գեւորգ» առաջնորդանիստ եկեղեցու եւ նրա «ձայների» մասին:

Թբիլիսին անհնար է պատկերացնել առանց Վրաստանի ամենակոլորիտային եկեղեցիներից մեկի՝ Սուրբ Գեւորգի, որը հարյուրամյակներ շարունակ վրացահայերին օգնել է պահպանել երգչախմբի ազգային ինքնությունը:

Եկեղեցին գտնվում է Կուր գետի աջ ափին, ժայռի տակ, որտեղ գտնվում է քաղաքային միջնաբերդը՝ Նարիղալա ամրոցը: Այն կառուցել է իշխան Ումեկը՝ Կարին քաղաքից (այժմ՝ Էրզրում), 1251 թվականին:

Սուրբ Գեւորգ եկեղեցին ունի յուրահատուկ էներգետիկա ու մթնոլորտ, որոնք առանձնահատուկ կոլորիտ են հաղորդում եկեղեցու վերականգնողական աշխատանքների ժամանակ հայտնաբերված որմնանկարները: Եկեղեցու պատերը գրեթե ամբողջությամբ պատված են տարբեր ժամանակներում Հովնաթանյան տոհմի վարպետների, Գեւորգ Բաշինջաղյանի (1857-1925), ինչպես նաեւ անհայտ նկարիչների կողմից արված որմնանկարներով:

Եկեղեցու յուրահատուկ էներգետիկան եւ մթնոլորտը կրկնապատկում է երգչախումբը, որն ամբողջացնում է Սուրբ Պատարագի արարողությունը: Ու դու ասես, մոռանում ես հոգսերդ, խորասուզվում աղոթքներիդ մեջ՝ ունկնդրելով Եկմալյանի, Կոմիտասի եւ այլոց ստեղծագործությունները:

Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու Մակար Եկմալյանի անվան երգչախմբում, երգում են ինչպես երիտասարդ պատանիներ ու աղջիկներ, այնպես էլ՝ մեծ ճանապարհ անցած երգիչներ:

Ներկայացնենք երգչախմբի անձնակազմից մի քանիսին՝ պարզաբանելով, թե ինչ այլ գործունեություն են նրանք ծավալում երգելուց զատ:

Երգչախմբի ղեկավարը Թբիլիսիի օպերային ստուդիայի, Ֆիլհարմոնիայի մեներգչուհի Սվետլանա Տատեւան է, ով գլխավորում է երգչախումբը եկեղեցու վերջին վերանորոգումից (2013-2015) հետո:

Միխայիլ Նազարյանը 25 տարեկան է, երգչախմբի մենակատարներից է: Արդեն 11 տարի է, ինչ ներգրավված է խմբի կազմում: Նրա բարձր եւ հզոր ձայնը շատերն են ճանաչում: Ի դեպ, Միխայիլն այս տարի բարձր ցուցանիշներով ընդունվել է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի «Սոլո ակադեմիական վոկալ» ֆակուլտետը: Երգելուց բացի, նա զբաղվում է նաեւ խոհարարական արվեստով:

24-ամյա Աշոտ Հարությունյանը երգչախմբում է արդեն 7 տարի: Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան է: Նրա նախասիրություններից մեկը նկարչությունն է:

Ռիչարդ Ասատուրովը երգչախմբում է արդեն տաս տարի, 23 տարեկան է: Նա Վրաստանի երիտասարդ ատամնաբույժների ասոցիացիայի ղեկավար եւ Եվրոպայի նոր ատամնաբույժների ասոցիացիայի անդամ է:

Ինեսսա Մակարյանը երկարամյա կենսագրություն ունեցող երգչուհիներից է: Երգում է արդեն 16 տարի: Տիրապետում է մի շատ հետաքրքիր արվեստի՝ գորգագործության:

Գովելի է, որ երգչախմբի անդամներից 7-ը Թբիլիսիի թիվ 104 դպրոցի ավագ դասարանների սաներ են, ում համար երգչախմբում ընդգրկվածությունը, նաեւ Վրաստանում հայ հոգեւոր կյանքին մերձենալու ու հավատքն առավել ամրապնդելու հնարավորություն է դառնում:

Գտնվելով Հայաստանից դուրս՝ մեր չքնաղագույն Վրաստանում, մեզ բոլորիս կապում է երգն ու հավատքը, մշակույթն ու արվեստը, ներկան ու ապագան:

Նշենք, որ Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու երգչախմբում ժամանակին երգել են օպերային թատրոնի հայտնի երգչուհիներ էլզա Գարսեւանիշվիլին, Լյալյա Սարաջիշվիլին եւ ուրիշներ:

ՄԱՐԻԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՉ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈԾԱԲՆԱԿ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս տարի, առաջին անգամ ընտրական վարչակազմն ամենամեծ ընդգրկվածությամբ կօգտագործի էլեկտրոնային տեխնոլոգիաները, եւ ընտրողների գրեթե 90 տոկոսը քվեարկությանը մասնակցության վավերացումն ու ձայների հաշվարկումը կստանա սարքերի միջոցով:

Ցանկացած ժողովրդավարական հասարակությունում հիմնարար է բոլոր քաղաքացիների իրավունքների հավասար մասնակցությունն ընտրական գործընթացին: Ժողովրդավարությունը հիմնված է հավասար իրավունքների եւ հնարավորությունների վրա՝ անխտիր բոլոր քաղաքացիների համար: Քվեարկության արգելքները՝ կապված լեզվի ու լիարժեք տեղեկատվության եւ կամ ֆիզիկական ներկայության հետ, վնասում եւ թուլացնում են ընտրական գործընթացի ամբողջականությունը:

Ուստի, ընտրական վարչակազմի նպատակն է բոլորի համար, անկախ լեզվական արգելքից, ստեղծել հավասար եւ ազատ ընտրական միջավայր: Հենց այդ նպատակով էլ ԿԸՀ-ում գործում է ազգային փոքրամասնությունների հարցերով աշխատող աշխատանքային խումբ, որի կազմում են ընտրական վարչակազմի ներկայացուցիչները, Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի եւ պետական գերատեսչությունների ներկայացուցիչները, միջազգային կազմակերպությունների ու ազգային փոքրամասնությունների ընտրական հարցերով աշխատանքի փորձ ունեցող տեղական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ընտրական վարչակազմի գործունեության կազմման ընթացքում, մենք հաշվի ենք առնում միջազգային եւ տեղական դիտորդական կազմակերպությունների կողմից ընտրություններին Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների հավասար մասնակցության ուղղությամբ տրված հանձնարարականները, որոնց, ի պատասխան, մեր իրավասությունների շրջանակներում մշտապես իրականացնում ենք գործնական քայլեր:

ԿԸՀ-ի կողմից պատրաստած բոլոր տեղեկատվական-գովազդային տեսահոլովակները թարգմանվում են հայերեն եւ ադրբեջաներեն ու տեղադրվում ԿԸՀ-ի կայք-էջի (cesko.ge) եւ YouTube հարթակում: Ընտրական ժամանակահատվածում տեսահոլովակները ներբեռնված են Հանրային հեռարձակողի կայք-էջում եւ տարածաշրջանային հեռուստաընկերությունների եթերներում:

Ընտրական վարչակազմն ազգային փոքրամասնության ներկայացուցիչների իրազեկման նպատակով հայերեն եւ ադրբեջաներեն տարածում է ընտրական տեղեկատվություն ԿԸՀ-ի կայք-էջի, տարածաշրջանային հեռուստաընկերությունների եւ ռադիոյի, ինչպես նաեւ տպագիր լրատվամիջոցների միջոցով:

Ընտրական ժամանակահատվածում շահագրգռված անձիք ընտրական հարցերին վերաբերող տեղեկատվություն կարող են ստանալ ԿԸՀ-ի կոնտակտ-հաբի (+995 25100 51) հայերեն եւ ադրբեջաներեն հաղորդող օպերատորներից:

Ազգային փոքրամասնությունների իրազեկման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք-էջում հրապարակված է «Տեղեկատվություն՝ ազգային փոքրամասնությունների համար» բաները, որտեղ տեղեկատվությունը մատչելի է վրացերեն, հայերեն եւ ադրբեջաներեն:

Ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում ապրող ընտրողները կարող են ԿԸՀ-ի կայք-էջում, «Ընտրող» (www.voters.cec.gov.ge) բաներում (պաստառ) վրացերեն, հայերեն եւ ադրբեջաներեն ստուգել ընտրողների միասնական ցուցակում իրենց եւ ընտանիքի անդամների տվյալները:

Սկսած 2010 թվականից, բոլոր ընտրություններին տեղամասային ընտրական հանձնաժողովների հայալեզու եւ ադրբեջանալեզու անդամների համար ցանկացած տեղեկատվական-ուսումնական նյութերը, որոնք անհրաժեշտ են նրանց գործառույթների իրականացման համար, թարգմանվում են նրանց համար համապատասխան լեզվով:

Ընտրական ժամանակահատվածում հայերեն եւ ադրբեջաներեն թարգմանում է նաեւ ընտրական սուբյեկտների, դիտորդական կազմակերպությունների եւ հավատարմագրված լրատվամիջոցների վերաբերյալ:

Քվեարկությանը հավասար մասնակցության համար հայերեն եւ ադրբեջաներեն թարգմանվում են ընտրական հետեւյալ նյութերը՝ ընտրողների ցուցակը (պատին փակցրած տարբերակը), ընտրական քվեաթերթիկներն ու քվեաթերթիկի լրացման կարգը, քվարկության մասնակցությունը ներկայացնող մանրամասները:

2017 թվականին նախաձեռնեցինք «Զրուցում ենք ընտրողների հետ» տեղեկատվական քարոզարշավը: Քարոզարշավի շրջանակներում, անցկացրինք հանդի-

պումներ Վրաստանի ողջ տարածքով, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերի մունիցիպալիտետների կենտրոններում եւ գյուղերում: Քարոզարշավի շրջանակներում տարածեցինք վրացերեն, հայերեն եւ ադրբեջաներեն ֆլայերներ:

Ընտրական գործընթացում էլեկտրոնային տեխնոլոգիաների ներդրումն ընտրական վարչակազմի համար նոր մարտահրավեր առաջացրեց: Պետք է իրականացվեր բնակչության բոլոր խմբերի իրազեկման գործընթացը էլեկտրոնային նոր քվեարկության ընթացակարգի վերաբերյալ: Ուստի, ընտրական գործընթացում էլեկտրոնային տեխնոլոգիաների օգտագործմանը զուգընթաց, 2023 թվականից սկսեցինք «Ինչպես քվեարկել ընտրական էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ» լայնածավալ տեղեկատվական քարոզարշավը:

Քարոզարշավի շրջանակներում, ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ընտրողների համար հանդիպումներ անցկացվեցին արդարադատության տներում, սպասարկման գործակալության մասնաճյուղերում, առեւտրական կենտրոններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, հանրային եւ մասնավոր գերատեսչություններում:

2022 թվականին իրականացված ընտրական բարեփոխման համապատասխան, ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր ունենալը պարտադիր դարձավ տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց եւ անդամների ընտրության համար: Վերոնշյալ օրենսդրական փոփոխության կատարման նպատակով, 2023 թվականից սկսեցինք տարածաշրջաններում հավաստագրման քննությունների անցկացումը:

Ընտրական վարչարարության գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավման ապահովման համար, տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար անձանց եւ անդամների հավաստագրման քննությունների համար հայերեն եւ ադրբեջաներեն թարգմանեցինք քննական թեստերը, որոնց օգտագործմամբ հայերենով եւ ադրբեջաներենով անցկացվեցին հավաստագրման քննություններ:

Ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում հավաստագրման քննությունների անցկացման համար, բացվեցին քննական 8 կենտրոններ Թելավիում, Բոլնիսիում, Մառնեուլիում, Գարդաբանիում, Թեթրիծղարոյում, Ախալցիխեում, Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում:

Հավաստագրման քննության վերաբերյալ տեղեկությունը տարածվեց նաեւ վրացերեն, հայերեն եւ ադրբեջաներեն տեսահոլովակներով տարածաշրջանային հեռուստաընկերությունների եթերում:

Մեզ համար առաջնահերթային ուղղություն է կիրթ ընտրողը, ինչը նպաստում է ընտրական գործընթացներում քաղաքացիական ներգրավման մակարդակի բարձրացմանը, ընտրողների ակտիվության աճին եւ իրազեկված ընտրության կատարմանը:

ԿԸՀ-ի ուսումնական կենտրոնը, ընտրական վարչակազմի հետ համատեղ, տարիներ շարունակ իրականացնում է տեղեկատվական-կրթական նախագծեր ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ընտրողների, այդ թվում՝ երիտասարդների եւ կանանց համար: Միջազգային եւ տեղական կազմակերպությունների հետ արգասաբեր համագործակցության ձեւաչափով մշակված ռեսուրսները, ստեղծված հանրային հարթակը եւ սպասարկումները ցանկացած ընտրողի ընձեռում են ընտրական տեղեկատվության հավասար մատչելիության եւ ընտրական գործընթացում լիարժեք ներգրավման հնարավորություն:

Պետական մյուս գերատեսչությունների հետ միասին մենք սերտ համագործակցում ենք Հաշտեցման եւ իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի հետ եւ պարբերաբար տեղեկավություն եք փոխանցում ընտրական վարչակազմի կողմից քաղաքացիական իրավահավասարության ու ինտեգրման պետական ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ակտիվությունների կատաման վերաբերյալ:

Ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հածնակատարի ընտրական վարչակազմի ղեկավարությունն իր բազմամյա համագործակցության ընթացքում, մանրամասն տեղեկատվություն է փոխանցում այն ակտիվությունների մասին, որոնք ԿԸՀ իրականացնում է ազգային փոքրամասնությունների հավասար մասնակցության ապահովման համար:

Մենք գիտակցում ենք հարցի հրատապությունն ու ջանք չենք խնայում ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների ընտրողների համար հավասար պայմաններ ապահովելու համար: Այդ գործընթացում ընտրական վարչակազմը մեծ նշանակություն է տալիս ներգրավված կողմերի ակտիվ մասնակցությանը: Նշանակալից է, որ ներգրավված բոլոր կողմերը, այդ թվում՝ նաեւ դուք՝ ընտրողներդ, համատեղ նպաստեք Վրաստանում 2024 թվականի խորհրդարանական ընտրությունները միջազգային չափորոշիչներին համապատասխան անցկացնելուն, քանի որ ընտրությունները բոլորի ընդհանուր գործն է:

Լուսանկարում.- ԿԸՀ նախագահը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդներին անձամբ ծանոթացնում է ընտրական էլեկտրոնային տեխնոլոգիաներին:

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՎԵՐԱՕԾՎԵՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մայր տաճարի վերաօծման առիթով Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը իր պատգամում մասնավորապես, ասաց.

«Տերունահաստատ Սուրբ էջմիածինը՝ լուսավորչակերտ Մայր Տաճարով, հավատիքն է Աստծո հետ մեր հավիտենական ուխտի, դարավոր վկան առ Աստված ու հայրենին նվիրումով ապրելու մեր համընդհանուր վճռականության, պայծառ փարոսը ազգային-եկեղեցական մեր անդաստանի: Արդար ու ճշմարիտ է՝ Սուրբ էջմիածինը հոգեփրկչական ու ազգապահպան իր ծառայությամբ դարձել է հիմնասյունը եւ անառիկ միջնաբերդը հայոց ինքնության ու լինելության, խորհրդանիշը մեր ազգի միասնականության եւ Արարատ

սուրբ լեռան պես մեր հարատեւության:

Սուրբ էջմիածնի հանդեպ աշխարհասփյուռ հայության որդիական ջերմ սիրով ու նախանձախնդրությամբ է ամուր մեր հայրենիքը, զորեղ եւ անկոտրում՝ միաբանությունը մեր ժողովրդի: Քրիստոսի կողմից հիմնադրված ոսկեխարիսխ այս սրբավայրը մշտապես լինելու է ազգային ու հոգեւոր կյանքի առանցքը, քանզի Արարատահայաց Սուրբ էջմիածինը Աստվածադրոշմ է, Սուրբ եւ անկորնչելի:

Հոգենորոգ այս պահին Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում համայն մեր ժողովրդի զավակներին, որ այսօր մեծագույն ուրախություն եւ հոգեւոր մխիթարություն են ապրում Աստծո Տաճարի վերաօծման ու վերաբացման առիթով»:

Նորին Սրբությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ էջմիածին» պատվո բարձր շքանշանին եւ «Դուստր Սուրբ էջմիածին» տիտղոսին ու Հայրապետական շքանշանին արժանացրեց Հայ Եկեղեցու ազգային բարերարներին, որոնց ընծայաբերումներով իրականացվեցին Մայր Տաճարի ամբողջական վերանորոգման աշխատանքները:

«ԴՐՈՇՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ»՝ ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՎԵՑ 21-ՐԴ ԴԱՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՄՅՈՒՌՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Սրբալույս Մյուռոնի օրհնության եւ էջմիածնի Մայր Տաճարի վերաօծման արարողություններին մասնակիցների թվում էին Վրաց Ուղղափառ եկեղեցու Ախալքալաքի-Կումուրդո թեմի առաջնորդ, միտրոպոլիտ Նիկոլոզ Փաչուաշվիլին, Հայ Առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի Սամցխե- Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Նշան վարդապետ Հմայակյանը, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանը, Վրաստանում գործող հայկական եկեղեցիների հոգեւոր հովիվները, Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու խաչքավոր Սամվել Պողոսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական Կարեն Երիցյանը, թեմի մամլո դիվան Սուսաննա Խաչատրյանը, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը: Այստեղ էին վիրահայ ներկայացուցիչներ՝ «Վրաստան» թերթի խմբագիր, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Վան Բայբուրթյանը (ով սկսած 1980 թվականից, 7-րդ անգամ է մասնակցում Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությանը), Վրաստանի կառավարության խորհրդարանական քարտուղարի աշխատակազմի աշխատակից Կարեն Եղիազարյանը, բարերարներ Գագիկ Աղաջանյանը՝ տիկնոջ հետ, Ալեքսանդր Ութմազյանը՝ տիկնոջ հետ, գործարար Արկադի Հովակիմյանը, Վրաստանում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Առնոլդ Ստեփանյանը, Մարի Առաքելովան, Մարի Միկոյանը, Արթուր Միրզոյանը, Էդուարդ Հակոբյանը:

Տերունական աղոթքով սկսվեց Մյուռոնօրհնության սրբազան արարողությունը: Սկզբում «Որ զշնորհս» շարականի երգեցողության ներքո բուրվառակիրները խնկարկեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած եպիսկոպոսաց դասը եւ Սրբալույս Մյուռոնի կաթսան, ապա՝ Հին ու Նոր Կտակարաններից հատվածներ եւ Սուրբ Մյուռոնին նվիրված աղոթքներ ընթերցվեցին: Ավետարանից հետո, հնչեց «Բաց մեզ Տէր» շարականը, որի ժամանակ խորան հրավիրվեց Մյուռոնի կնքահայրը, ով եւ բացեց Սուրբ Մյուռոնի կաթսան:

Այնուհետեւ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մյուռոնի կաթսայի մեջ հեղեց ծաղկանց նյութն ու բալասանը, որից հետո, ձեռամբ Նորին Սրբության կաթսայի մեջ լցվեց նաեւ Անթիլիասում օրհնված Մյուռոնը, որ Վեհափառ Հայրապետին էր մատուցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Գերաշնորհ Տեր Մեսրոպ արքեպիսկոպոս Սարգիսյանը:

Նորին Սրբությունն օրհնեց նոր Մյուռոնը, տյառնագրեց եւ խառնեց նաեւ Կենաց Փայտի մասունքակիր խաչով, Աստվածամուխ Սուրբ Գեղարդով եւ հայոց հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջով:

Այնուհետեւ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց ներկաներին եւ համայն հայությանը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում, մասնավորապես, ասաց.

«Մյուռոնը տեսանելի նշանն է Սուրբ Հոգու ներկայության: Սուրբ Մյուռոնի դրոշմով աստվածային օրհնության աղբյուրն է բացվում անհատի եւ ժողովրդի կյանքում: Մյուռոնով օծյալը արժանի է դառնում աստվածային երկնառաք շնորհների, նորոգվում՝ բարին խորհելու եւ արարելու, ապրելու Աստծո երկյուղով եւ անվախ՝ ընդդեմ չարի: Սուրբ Մյուռոնի կնիքը հաստատումն է Քրիստոսի հետ միության եւ Սուրբ Եկեղեցուն անդամագրության, այլեւ ազգային ինքնության եւ առհավատչյան առ Աստված հավատարմության:

Սրբալույս Մյուռոնը դարեդար միմյանց է շաղկապել աշխարհասփյուռ մեր ժողովրդի զավակներին, միավորել Հայրենիքն ու Սփյուռքը: Սուրբ Մյուռոնով մենք մեկ ազգ ենք եւ մեկ Եկեղեցի: Այսօր էլ Սուրբ Մյուռոնը, Նվիրապետական Աթոռների գահակալների, թեմական առաջնորդների միջոցով ընծայվելով աշխարհասփյուռ մեր ժողովրդին, վերստին ամրապնդում է ի հոգեւորս անլուծանելի մեր միասնականությունը:

Հայրապետական Մեր հորդորն ու պատգամն է աշխարհասփյուռ Մեր զավակներին՝ մյուռոնադրոշմ պահել մեր կյանքի ընթացքը, հաստատուն մնալ մեր պետության շահերի պաշտպանության դիրքերում եւ չվտանգել ազգի ապագան, քանզի ով օծված է Սրբալույս Մյուռոնով, չի կարող ուրանալ անկախ հայրենիք ունենալու իր հայրերի երազները, հրաժարվել սեփական պատմությունից: Ով օծված է Մյուռոնով, չի կարող մերժել իր նախնյաց ժառանգությունը, նսեմացնել սրբագործված արժեքները, եղծել իր ազգային դիմագիծն ու իղձերը: Ով օծված է Սրբալույս Մյուռոնով, կոչված է դառնալու ճշմարտության առաջամարտիկ, բարիքի կերտող եւ սիրո քարոզիչ: Եվ վերջապես, ով օծված է Սրբալույս Մյուռոնով, նա երկյուղած պիտի լինի միայն ու միայն Աստծուց, եւ աներկյուղ՝ թշնամիների ու սպառնալիքների առջեւ»:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆՈՎ ԱՆՈԹԸ

2024 թվականի սեպտեմբերի 30-ին, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Վեհարանում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնի բաշխման արարողությունը:

Տերունական աղոթքից եւ սրբազան արարողությունների գնահատանքից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնությամբ եւ վստահության պատգամով Սրբալույս Մյուռոնով անոթը փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանին:

Վիրահայոց թեմի առաջնորդը խոնարհումով վստահեցրեց Վեհափառ Հայրապետին, որ Մայր Աթոռից բաշխվող Մյուռոնը հոգեւոր նորոգություն ու զորություն կպարգեւի հայ ժողովրդին, վիրահայ հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետը Սուրբ Մյուռոնով լի անոթները փոխանցեց նաեւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչներին:

Արարողությունն ամփոփվեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու պատգամով:

Ըստ «Արմենպրեսի» եւ Սուրբ էջմիածին Մայր Աթոռի մամլո դիվանի նյութերի

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԵՐՐՈՐԴ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 1-ին Երեւանում անցկացվեց երրորդ Եվրասիական տնտեսական համաժողովը, որի աշխատանքին մասնակցեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինը, կազմակերպության անդամ երկրների կառավարությունների ներկայացուցիչներ:

Դիտորդի կարգով համաժողովի աշխատանքին մասնակցեցին Իրանի նախագահի առաջին տեղակալ Մոհամմադ Ռեզա Արեֆը եւ Ուզբեկստանի վարչապետ Աբդուլլա Արիպովը: Համաժողովի աշխատանքին մասնակցեց նաեւ Կուբայի կառավարության պատվիրակությունը:

Նախօրեին Երեւանում անցկացվեցին նիստեր պանելային քննարկումների ձեւաչափով: Բանավեճերի մասնակիցները քննարկեցին ենթակառուցվածքի եւ գյուղատնտեսության լոգիստիկայի վերաբերյալ հարցեր, իրավակիրառ պրակտիկան եւ հակամենաշնորհային կարգավորումը տրանսսահմանային շուկաներում, ԵԱՏՄ էլեկտրոնային առեւտրային հարթակները, ԵԱՏՄ-ում էլեկտրոնային առեւտրի տեխնիկական կարգավորումը, ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի հեռանկարներն ու առավելությունները:

Եվրասիական տնտեսական համաժողովի լիագումար նիստից հետո անցկացվեց Եվրասիական Միջկառավարական խորհրդի նիստ՝ նեղ կազմով, ապա՝ ընդլայնված կազմով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

12.10.2024 Սուրբ թարգմանիչ Վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն

Սուրբ թարգմանիչ Վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ԱՆՅԿԱՅՐԵՅ ՆՈՐ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Սեպտեմբերի 30-ին Թբիլիսիի Եվրոպայի հրապարակում մայրաքաղաքի քաղաքապետ Կախա Կալաձեն մասնակցեց 18 մետրանոց 25 նոր ավտոբուսների ներկայացման շնորհանդեսին:

Խոսեց մայրաքաղաքի տրանսպորտային քաղաքականության մասին՝ Թբիլիսիի քաղաքապետը նշեց, որ իրենց գործունեության հիմնական ուղղություններից մեկը մայրաքաղաքի ավտոբուսային երթուղու ամբողջական նորարարացումն է:

- Այսօր մայրաքաղաքի բնակչությանը ցանկանում ենք ներկայացնել 25 միավոր նոր ավտոբուս: Ընդհանուր առմամբ, Թբիլիսիում կլինի 100 միավոր 18 մետրանոց ավտոբուս: Հիմնական նպատակն է բոլորին հասանելի դարձնել հասարակական տրանսպորտը, որպեսզի մայրաքաղաքում քաղաքային տրանսպորտով տեղաշարժը լինի անվտանգ եւ արագ:

Մենք ակնկալում ենք ավելացնել եւս 100 միավոր 18 մետրանոց ավտոբուս: Ընդհանուր առմամբ, բնակչությանը կսպասարկի 200 միավոր 18 մետրանոց ավտոբուս: Այս նախագիծը կավարտվի մինչեւ հաջորդ տարեվերջ,- ասաց Կախա Կալաձեն:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ. «ԱԲՈՒԼԸ» ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Է ԽԱՂԸ

Ինչպես արդեն հաղորդել էինք, Վրաստանի առաջնության տարածաշրջանային լիգայում հանդես եկող Ախալքալաքիի «Աբուլը» առաջին խաղաշրջանը եզրափակեց 17 միավորով (հինգ՝ հաղթանակ, երկու՝ ոչ-ոքի, հինգ՝ պարտություն): Երկրորդ խաղաշրջանում աբուլցիներն անցկացրին հինգ հանդիպում՝ իրենց ակտիվում գրանցելով 10 միավոր:

- Ուրախալի է, որ հանդիպումից հանդիպում փոխվում է «Աբուլի» խաղի որակը: Դա ակնհայտորեն երեւում է առաջնության երկրորդ խաղաշրջանում,- «Վրաստանի» հետ հեռախոսազրույցում ասաց «Աբուլի» գլխավոր մարզիչ Արամ Սուքիասյանը:

*- Դատեք ինքներդ. երկրորդ խաղաշրջանի մեկնարկային երկու հանդիպումներից հավաքեցինք 4 միավոր: Ճիշտ է, երրորդ հանդիպմանը, սեփական հարկի տակ, նվազագույն հաշվով՝ 0:1 զիջեցինք առաջնության առաջատարներից մեկին՝ Ախալցիխեի «Սամցխեին», սակայն, հաջորդ երկու հանդիպումներն ավարտեցինք հաղթանակով. Թբիլիսիում 5:2 հաշվով հաղթեցինք Սուխումիի «Դինամոյին», իսկ մեր դաշտում 2:0 հաշվով հաղթեցինք թբիլիսյան «Նորչի Դինամոյին»,-*ասաց Արամ Սուքիասյանը:

Ներկա դրությամբ, «Աբուլը» Վրաստանի առաջնության տարածաշրջանային լիգայում՝ 27 միավորով, 7-րդ տեղումն է: Աղյուսակը 46 եւ 40 միավորով գլխավորում են Խաշուրիի «Իվերիան» եւ Ախալցիխեի «Սամցխեն»:

«Աբուլի» կազմում իրենց բովանդակալից խաղով կրկին աչքի են ընկնում Ռաֆայել Դարբինյանը (թիմի ռմբարկու, 15 գոլի հեղինակ), Ռոմիկ Ճորոխյանը, Ստեփան Մարգարյանը...

ԿԱՅԱՅԱՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԵՎ ԻՏԱԼԱԿԱՆ «ՄԻԼԱՆ» ԱԿՈՒՄԲԻ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Թբիլիսիի Միխեիլ Մեսխու անվան մարզադաշտում կայացավ Վրաստանի հավաքականի եւ «Միլանի» լեգենդների հանդիպումը, որի հիմնական ժամանակն ավարտվեց 2:2 հաշվով, իսկ «Միլանը» 11 մետրանոց հարվածաշարում հաղթեց 3:1 հաշվով:

«Միլանի» կազմում հանդիպմանը մասնակցեցին այնպիսի ճանաչված ֆուտբոլիստներ, ինչպիսիք էին Ռիկարդո Կական, Դիդան, Մաքսիմո Օդոն, Ալեքսանդրո Կոստակուրտան, Ռիվալդոն, Մարկո Բորիելոն, Կաֆուն, Կլարենս Զեեդորֆը... Վրաստանի հավաքականի կազմում հանդես եկան Կախա Կալաձեն, Ալեքսանդր Իաշվիլին, Սանդրո Կոբախիձեն, Գիորգի Քինքլաձեն, Շոթա Արվելաձեն, Գիորգի Դեմետրաձեն... «Միլանի» կազմում ակտիվ էր Ռիկարդո Կական, իսկ Վրաստանի հավաքականի կազմում հարձակման գծում փորձեցին հայտնվել Ալեքսանդր Իաշվիլին, Սանդրո Կոբախիձեն, Գիորգի Քինքլաձեն ու Շոթա Արվելաձեն:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Խ.Աբովյանի ծննդավայրը: «Նեմեսիս» գործողության մասնակից Հակոբ Տեր-Հակոբյանի կեղծանունը: 11.Իրոք, իսկապես: 12.Գեներալի ուսերին: 13.Ծովինար աստվածուհու մյուս անունը: 14.Խուլ ու ...: 15.«... ճնճղուկը բազեի ճանկերից, Ուզում է որս խլել» (աշուղ Ջիվանի): 16.Սուրբ Հոգին: 18.Ցուցական դերանուն: 19.Գիքորի մայրը: 20.Հիսուսը իսլամում: 22.Ավարայրի ճակատամարտի հերոս զորավար ... Մամիկոնյան: 24.Բագրատունիների մայրաքաղաքներից: 26.Պարույր Սեւակի բանաստեղծություններից: 27.Սպասի բաղադրիչ մաս: 30.Արյունածուծ միջատ: 32.Վարժարան Հայաստանում: 33.Վայրի գազանիկ: 34.«... Մուրոմեց» ռուսական բիլինա: 36.Ավազից ու ցեմենտից շինարարական շաղախ: 37.Էլեկտրականորեն լիցքավորված մասնիկ: 38.Ոչխարի բուրդը: 39.... ու ահյակ: 40.Լճի, գետի, ծովի ...: 41.Երկարության հնացած չափ: 42.«Միգ» կործանիչի ստեղծողը ... Միկոյան: 44.... բեն Լադեն: 46.Հեռախոսային բառ: 47.Իզուր, ապարդյուն: 48.....մաք, ...խավել, ...ր: 50.«Իմ տան մոտ ապրի, ... արագիլ» («Արագիլ» երգից): 51.Ջեկ Լոնդոնի վեպերից «... Իդեն»: 55.Հոտ չունեցող: 57.Ամերիկյան դերասանուհի ... Գարդներ: 58.Երգեմ, ..., երգի: 59.Մաշտոցի ծննդավայր գավառը: 61.Հայկական առաջին երաժշտական ֆիլմը: 62.Վիսոցկու կինը ... Վլադի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ղեկավար, առաջնորդող: 3.ԱՄՆ-ի նահանգներից: 4.... բույրը: 5.Սար Արեւմտյան Հայաստանում: 6.Շոթա Ռուսթավելու գրական հերոսուհի: 7.Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս ... Ա Քեշիշյան: 8.Քաղաք Հունաստանում: 9.Ե'վ Եդիգարյանը, ե'ւ Մուկուչյանը: 10.Փողոց Թբիլիսիում: 14.Հ. Շիրազի բանաստեղծություններից «... մանկություն»: 17.Վանքային համալիր Արցախում: 21.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 23.Խանութը Հին Թիֆլիսի բարբառով: 25.Վրաց հանրաճանաչ դերասանուհի: 28.Անհաստատ, ոչ վստահ, կասկածելի: 29.Ստիպելով, բռնի հեռացնել: 31.Այծի բալիկը: 33.Որմնանկարիչ Մինաս Ավետիսյանի հայրենի ծննդավայր գյուղը: 35.Քաղաք ԱՄՆ-ում Նյու ...: 41.Մարդկության հայրը: 42.Թռչունների արքան: 43.Ավստրիացի հանրահայտ կոմպոզիտոր: 45.Ե'վ Շերենցը, ե'ւ Գասպարյանը: 49.Եռակի եւ քառակի ...: 50.Լերդացած արյան գույնը: 52.Իտալացի կոմպոզիտոր Վերդիի օպերաներից: 53.Տարվա տասներկու ամիսը: 54.Հայոց դիցուհիներից: 56.Հույների աստվածուհիներից, Զեւսի կինը: 60....ևո, ...կո, ...հար:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Համախոհ: 9.Ալվան: 10.Լանչ: 11.Լիբերեց: 13.Անտառ: 16.Կալ: 17.Ջիմ: 19.Անխոհ: 22.Ալինա: 24.Անգոլա: 25.Ինքը: 27.Անիսոն: 29.Բալաստ: 32.Ալաբամա: 33.Նաիրիտ: 35.Քարբ: 37.Գնու: 39.Դանթե: 40.Ռենո: 43.Կիմ: 44.Թամբ: 47.Սեչ: 49.Նաիրա: 50.Ողջի: 53.Խուրձ: 54.Ունք: 55.Ալչու: 57.Այլ: 58.Իտրիում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մաշիկ: 2.Ճառել: 3.Քոլեջ: 4.Քաչա: 5.Ավետ: 6.Ամառ: 8.Հացիկ: 12.Բալի: 14.Նենգ: 15.Ամոլ: 18.Վանո: 19.Անխաբ: 20.Խորամանկ: 21.Հաշտ: 23.Նիստրու: 26.Քնատ: 28.Նվագ: 29.Բախ: 30.Լաքա: 31.Սարթիփ: 34.Ինգմար: 36.Բեմ: 38.Անե: 41.Եսաուլ: 42.Ոչ:ոքի: 45.Անուշ: 46.Բիձա: 48.Աջար: 51.Իլի: 52.Հում: 56.Զու:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅԵՂԵՈ ՅՈՒՆԱՅԱՐՏՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՊՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆԻ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445